RUSSIAN INTERNATIONAL OLYMPIC UNIVERSITY

«Սպորտային կառույցների և միջոցառումների կառավարում»

11-13 մայիս 2026 թ., Երևան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սպորտային ենթակառուցվածքների և մարզական միջոցառումների արդյունավետ կառավարման գործընթացում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զանգացման և դրանց համատեղման անհրաժեշտությունը:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Սպորտային արդյունաբերության հեղինակավոր և փորձառու մասնագետների կողմից դասավանդում:
- Ծրագրի մասնակիցների, սպորտային արդյունաբերության ներկայացուցիչների և Հայաստանի ակադեմիական համայնքի միջև փոխգործակցության լրացուցիչ հնարավորությունների ստեղծում:
- Ռուսական և միջազգային պրակտիկայից իրական դեպքերի վերլուծության հնարավորություն:
- Ռուսաստանի միջազգային օլիմպիական համալսարանի և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի համատեղ վկայականի տրամադրում:

«ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

24 ակադեմիական ժամ

Սպորտային կառույցների արդյունավետություն, անվտանգություն և մատչելիություն

- Հիմնական գործոններ, որոնք ազդում են սպորտային կառույցների կառավարման արդյունավետության վրա:
- Սպորտային կառույցների անվտանգություն:
- Ներառական սպորտային կառույց ստեղծելու սկզբունքները (հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները):
- Սպորտային կառույցների ձևափոխում՝ պարալիմպիկ և սուրդլիմպիկ մարզաձևերի ուսումնամարզական գործընթացների և մրցումների անցկացման համար:

Սպորտային կառույցների կառավարման հիմունքներ

- Սպորտային մեծ մրցաշարերի անցկացման ավանդույթներ:
- Սպորտային կառույցների նախագծման և կառուցման նորագույն միտումներ:
- Սպորտային կառույցների կառավարման և շահագործման նորագույն ուղղություններ: Տարբեր տեսակի սպորտային կառույցների կառավարման առանձնահատկություններ:
- Սպորտային նորագույն սարքավորումներ և պարագաներ:

Սպորտային միջոցառումների կազմակերպում

- Ներածություն սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:
- Սպորտային միջոցառումների պլանավորում:
- Սպորտային կառույցների նպատակային (օպերացիոն) օգտագործում:

ԲԱՆԱԽՈՍՆԵՐ

Լև Գուտման

Ռուսաստանի հաշմանդամների սպորտային միության (ՌՀՍՄ) գլխավոր մենեջեր, «Փորձագիտա-խորհրդատվական կենտրոն «Էվրիկա»» ՍՊԸ»-ի գլխավոր տնօրեն, Ռուսաստանի հավաքական թիմերի մարզման «Կրիմսկի» կենտրոնի փորձագիտական խորհրդի անդամ:

Մասնագիտական փորձ

«Բոլորին հասանելի աշխարհ» հաշմանդամների համառուսաստանյան հասարակական կազմակերպության կամավոր հավատարմագրման համակարգի մշակման և ներդրման գործընթացի վերահսկիչ և առաջատար փորձագետ, 30 տարվա փորձ՝ սպորտային կառույցների նախագծման և սարքավորումներով համալրման ոլորտում, հաշմանդամների համար օբյեկտների և ծառայությունների մատչելիության ապահովման ոլորտում աշխատանքի բազմամյա փորձ

Ռուսաստանի Դաշնությունում մասնակցել է տարբեր սպորտային կառույցների նախագծման և սարքավորումներով համալրման աշխատանքներին, այդ թվում՝ XXII Ձմեռային Օլիմպիական խաղեր 2014, Սոչի, XI Ձմեռային Պարալիմպիկ խաղեր 2014, Սոչի, Ֆուտբոլի աշխարհի առաջնություն 2018 թ., Համալսարանական խաղեր 2013 թ., Կազան, Համալսարանական խաղեր 2019 թ., Կրասնոյարսկ:
Ռուսաստանի միջազգային օլիմպիական համալսարանի լրացուցիչ կրթության ծրագրերի, Պ. Ֆ. Լեսգաֆտի անվան համալսարանի լրացուցիչ կրթության ինստիտուտի, և Կրասնոյարսկի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ինստիտուտի (ՏՊԳՀ) դասախոս:

«Sport Build» և «SportFacilities» ամսագրերում տպագրված հոդվածների հեղինակ, «Սառցե արենաներ», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայությունների պաշտպանվածություն» ուսումնական ձեռնարկների համահեղինակ:

ԲԱՆԱԽՈՍՆԵՐ

Լեոնիդ Ժեստյանիկով

Սպորտային կառույցների ռուսական ասոցիացիայի առաջին փոխնախագահ, Ռուսաստանի Պարալիմպիկ կոմիտեի գործադիր կոմիտեի անդամ:

Տնտեսական գիտությունների դոկտոր, ունի MBA աստիճան:

Մասնագիտական փորձ

Ուսուցում է անցել ՄՕԿ-ի ծրագրերով Պեկին 2008, Վանկուվեր 2010, Լոնդոն 2012 Օլիմպիական խաղերում: Հանդես է եկել որպես խորհրդատու «Սոչի-2014» ՕԽ–ի հայտագրման կոմիտեի աշխատանքների ընթացքում:

Մասնակցել է Ռուսաստանի Դաշնությունում ավելի քան 50 սպորտային կառույցների ստեղծման աշխատանքներին, այդ թվում՝ 2014 թ. Սոչիի Օլիմպիական և Պարալիմպիկ խաղերին, ինչպես նաև Ֆուտբոլի աշխարհի 2018 առաջնության ընթացքում: Մասնակցել է սպորտային կառույցների կառուցման և վերակառուցման ոլորտում բազմաթիվ դաշնային և տարածաշրջանային նախագծերի իրականացման աշխատանքներին:

Հեղինակել է ավելի քան 30 գիտական աշխատանքներ սպորտի ոլորտում: «Սառցե արենաներ», «Ֆուտբոլի ստադիոններ», «Սպորտային օբյեկտներ՝ պարալիմպիկ սպորտի և հաշմանդամների ֆիզիկական կուլտուրայի համար» գրքերի հեղինակ և խմբագիր:

ԲԱՆԱԽՈՍՆԵՐ

Աննա Սեմյոնովա

Միավորված Ազգերի Կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում նախագծերի ղեկավար

Տնտեսական գիտությունների թեկնածու

Մասնագիտական փորձ

Ռուսաստանում և աշխարհում միջոցառումների կազմակերպման և անցկացման ավելի քան 20 տարվա փորձ, այդ թվում՝ XXII Ձմեռային Օլիմպիական խաղեր 2014, Սոչի, XI Ձմեռային Պարալիմպիկ խաղեր 2014, Սոչի, Ֆուտբոլի աշխարհի առաջնություններ (2018, 2022), G20 միջազգային տնտեսական գագաթաժողովներ (Ռուսաստան, Սաուդյան Արաբիա), Եվրոպայում, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Belt and Road Initiative ՄԱԿ-ի տարածաշրջանային հանձնաժողովների նիստեր:

Որպես հրավիրված դասախոս դասավանդում է Ռուսաստանի միջազգային օլիմպիական համալսարանում, Հոնկոնգի համալսարանում (University of Hong Kong), ՄԱԿ-ի United Nations System Staff College–ում (Թուրին), Սինգապուրի ազգային համալսարանում (National University of Singapore) և Կենտրոնական Ասիայի համալսարանում: